

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

1 ապրիլի 2014 թ.

N 199-Ն

ք. Ստեփանակերտ

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՅՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի և 48-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Սահմանել ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների բովանդակությունը և դրանց ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՅՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. Ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպությունը (այսուհետ՝ դիմումատու), Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի համաձայն, դիմումին կից ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները ներկայացնում է սույն պահանջներին համապատասխան:

2. Դիմումատուն լիազոր մարմին է ներկայացնում՝

1) ընդերքօգտագործման ոլորտում ունեցած մասնագիտական աշխատանքի փորձի մասին տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի.

2) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) կամ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախագծով (այսուհետ՝ նախագիծ) պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, իսկ համապատասխան մասնագետների հետ կնքված պայմանագրերի դեպքում նաև համապատասխան պայմանագրերի պատճենները.

3) ծրագրի կամ նախագծի իրականացման համար անհրաժեշտ՝

ա. տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի, իսկ օրենքով սահմանված կարգով օգտագործման իրավունքով պատկանող տեխնիկական միջոցի համար՝ նաև համապատասխան պայմանագրի պատճենը,

բ. ֆինանսական միջոցների մասին տեղեկանք՝ համաձայն N 4 ձևի, իսկ տրամադրված վարկային գծի կամ բանկային երաշխիքի, կամ ֆինանսական

միջոցների փոխառության առկայության դեպքում՝ նաև համապատասխան ֆինանսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմնի կողմից տրված՝ հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող հինգ օրվա դրությամբ:

3. Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունք հայցելու համար կարող են դիմել առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող կազմակերպությունները, իսկ մասնագիտական աշխատանքի փորձի բացակայության դեպքում՝ հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող՝ ինժեներատեխնիկական կազմ կամ մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող մասնագետների հետ կնքված պայմանագրեր ունեցող կազմակերպությունները:

4. Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունք հայցելու համար կարող են դիմել առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող կազմակերպությունները, իսկ մասնագիտական աշխատանքի փորձի բացակայության դեպքում՝ երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող՝ ինժեներատեխնիկական կազմ կամ մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող մասնագետների հետ կնքված պայմանագրեր ունեցող կազմակերպությունները:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ**

Սույնով \_\_\_\_\_-ը հայտնում է, որ դիմումը  
(կազմակերպության անվանումը)

ներկայացնելու տարվան նախորդող տարիների ընթացքում ընդերքօգտագործման ոլորտում իրականացրել է աշխատանքներ (այդ թվում՝ նաև պայմանագրային), որոնց ցանկը ներկայացվում է ստորև.

NN ը/կ	Նախկինում կատարված աշխատանքների՝ ընդերքօգտագործման ձևերը
1	2
1.	
2.	
3.	

\_\_\_\_\_  
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20\_\_թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԿԱՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

№ ը/կ	Մասնագետի անունը, ազգանունը	Որակավորումը	Մասնագիտական աշխատանքի փորձը	Նախկինում կատարած աշխատանքի անվանումը
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ \_\_\_\_\_  
ինժեներատեխնիկական կազմը հավաստող աշխատանքային պայմանագրերի  
պատճենները:

\_\_\_\_\_  
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՈՒՆ Ը/Կ	Տեխնիկական միջոցի անվանումը	Քանակը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Տեխնիկական միջոցի տեխնիկական վիճակը (սարքին է կամ ենթակա է վերանորոգման)
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ \_\_\_\_\_ տեխնիկական միջոցների նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող պայմանագրերի պատճենները:

\_\_\_\_\_  
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ,  
ԿԱՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

\_\_\_\_\_ -ը հավաստում է, որ իր

(կազմակերպության անվանումը)

Ֆինանսական միջոցները \_\_\_\_\_

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

դրությամբ կազմում են \_\_\_\_\_ դրամ:

Կից ներկայացնում եմ \_\_\_\_\_

Ֆինանսական կազմակերպության հետ կնքված վարկային գծի տրամադրման կամ  
բանկային երաշխիքի, կամ ներգրավված ֆինանսական միջոցների փոխառության  
մասին պայմանագրի պատճենը:

\_\_\_\_\_ (կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թ.